

ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 15 Սեպտեմբերի, 2008

Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիլի Յայաստան այցելութեան վերաբերեալ ՀՀ-ի Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կեցուածքը եւ տեսակէտը ներկայացնելու նպատակով Հինգշաբթի, Սեպտեմբերի 4-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Կենտրոնական Կոմիտէի «Փէշքերեան» կենտրոնի ժողովարահում տեղի ունեցաւ հանդիպում-զրոյց գաղութիս հայկական լրատուամիջոցների ներկայացուցիչների եւ մտաւորականների մասնակցութեամբ: Միջոցառման ընթացքում ելոյթ ունեցաւ Կենտրոնական Կոմիտէի անդամ, իրաւաբան Սեդո Պոյաճեանը, որը վերահաստատելով Կենտրոնական Կոմիտէի այն տեսակէտը, ընդ որում Յայաստանը պէտք է ունենայ բարի դրացիական յարաբերութիւններ իր հարեւան բոլոր երկրների հետ, որպէսզի չհնքամեկուսականայ արտաքին աշխարհից, շեշտեց, որ «այս բոլորը, սակայն, չի նշանակում, որ պէտք է զիջենք մեր սկզբունքները: «Այս բոլորը չի նշանակեր, թէ ինչ-որ մեզմէ խնդրուի պիտի ընենք եւ տեղ մըն ալ պիտի գայ, որ մեր ամբողջ ազգային դրամազուխը, ազգային համոզումները, սկզբունքները մէկդի պիտի դնենք, պարզապէս, պատառ մը հաց ապահովելու համար»: Միջոցառմանը ելոյթ ունեցաւ նաեւ ՀՀ-ի Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ, իրաւաբան Վիգէն Սոնենց-Փափազեանը, որը հիմնականում ծանրացաւ Յայոց Ցեղասպանութեան ճանաչման վրայ, մտահոգութիւն յայտնելով, որ այս այցելութիւնը չպէտք է ստանայ Յայոց Ցեղասպանութեան հարցը շրջանցելու բնոյթ, քանի որ Թուրքիան պատասխանատու է մարդկութեան դէմ գործած այս յանցանքի համար եւ որ այն ամէն ինչ անում է ժխտելու եւ ուրանալու Յայոց Ցեղասպանութեան փաստը, որպէսզի չպարտաւորուի իրաւական հատուցում տալու միջազգայնօրէն դատապարտուած այս յանցագործութեան համար: Միջոցառմանը, հարց ու պատասխանի կարգով տեղի ունեցան նաեւ մտքերի լայն փոխանակումներ Թուրքիայի նախագահի Յայաստան այցի առնչութեամբ: Նշենք, որ Սեդո Պոյաճեանի եւ Վիգէն Սոնենց-Փափազեանը ելոյթները ամբողջութեամբ կարելի է լսել՝ միանալով ՀՀ-ի Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կայքէջին՝ www.ARF1890.com հասցեով:



«Հայերը Օբամայի Համար» կազմակերպութեան 20 անդամներ Ուրբաթ, Սեպտեմբերի 5-ին մասնակցել են Միացեալ Նահանգների Դեմոկրատական կուսակցութեան նախագահական թեկնածու Բարաք Օբամայի Հարաւային Կալիֆորնիայի ընտրապայքարի կենտրոնատեղիի բացման արարողութեանը, միանալով մօտաւորապէս 750 այլ համակիրների, ովքեր եկել էին նեցուկ կանգնելու Օբամայի ընտրապայքարին: «Հայերը Օբամայի Համար» կազմակերպութեան գործիչներից Սարո Հարունը այն կարծիքն է յայտնել, որ հայութիւնը այս ընտրապայքարում կարող է ունենալ շատ կարեւոր դերակատարութիւն, յատկապէս Նեւադայի նահանգում: Այդ պատճառով, նշել է նա, կազմակերպութիւնը որոշել է ամէն շանք գործադրել, որպէսզի հնարաւոր լինի նախագահ ընտրել Օբամային՝ այն միակ թեկնածին, որը խոստացել է Յայոց Ցեղասպանութիւնը ճանչել՝ նախագահ ընտրուելուց յետոյ: Սոյն հաւաքին ներկայ է եղել նաեւ Լոս Անջելոսի քաղաքապետական խորհրդի նախագահ Էրիք Գարսեթին, որը «Հայերը Օբամայի Համար» կազմակերպութեան գործիչների հետ ունեցած զրոյցի ժամանակ շեշտել է, թէ վերջին մի քանի ընտրութիւնները ցոյց են տուել, որ հազարաւոր նոյնսիկ հարիւրաւոր քուէներով կարելի է փոխել ընտրութիւնների արդիւնքները: Լոս Անջելոսում հաստատուած եւ Միացեալ Նահանգների 50 նահանգներում մասնաճիւղեր կամ գործակիցներ ունեցող «Հայերը Օբամայի համար» կազմակերպութիւնը աշխատանք է տանում ապահովելու համար մեծ թուով հայ քուէարկուների մասնակցութիւնը այս տարուայ նախագահական ընտրութիւններում, միաժամանակ նեցուկ կանգնելով Օբամայի ընտրութեանը: Կազմակերպութեան գործունեութեան մասին յաւելեալ տեղեկութիւններ ձեռք բերելու համար կարելի այցելել կազմակերպութեան կայքէջը՝ www.armeniansforobama.com համացանցային հասցեով:



ՀՀ-ի Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի, ինչպէս նաեւ Սակրամենտոյի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները կոնգրեսական Դէն Լանգրընի հետ վերջերս ունեցած հանդիպման ժամանակ շնորհակալութիւն են յայտնել հայութեանը նեցուկ կանգնելու կոնգրեսականի կեցուածքին համար եւ մասնաւորաբար դրուատել են Յայոց

Ցեղասպանության ճանաչման վերաբերել թիւ 106 բանաձեւը հովանաւորելու նրա գործադրած ջանքերը: Հանդիպման ընթացքում քննարկուել են նաեւ վերջին իրադարձութիւնները, կենտրոնանալով յատկապէս Հայոց Ցեղասպանութիւնը ուրանալու ուղղութեամբ Թուրքիայի կողմից կատարուող ճնշումների վրայ, որոնք դրսեւորում են ամերիկեան թէ՛ քաղաքական եւ թէ՛ կրթական շրջանակներում: Կոնգրեսական Լանգրընը վստահեցրել է, որ ինքը քուէարկելու է յօգուտ 106 բանաձեւի, երբ այն քուէարկութեան դրուի Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի լիագումար նիստում:



Շաբաթ, Օգոստոս 30-ին պաշտօնապէս նշուել է Լաս Վեգաս քաղաքի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Սօսէ Մայրիկ» մասնաճիւղի բացումը, որի ընթացքում անդամագրուեցին 10 նոր երիտասարդներ, ստեղծելով Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան նորագոյն մասնաճիւղը Արեւմտեան Ամերիկայում: Երդման արարողութեանը ներկայ են եղել մօտաւորապէս 100 հիւրեր՝ Նեւադայի եւ Կալիֆորնիայի նահանգներից: Երդման արարողութիւնը կատարուեց ՀԵԴ-ի Կենտրոնական վարչութեան փոխներկայացուցիչ Վաչէ Թովմասեանի եւ ՀՀԴ Լաս Վեգասի «Իշխան» կոմիտէի անդամ Ռազմիկ Լիպարեանի նախագահութեամբ: Արարողութեան ընթացքում երիտասարդները ուխտել են իրենց ուժականութիւնն ու կարողութիւնները ի սպաս դնել ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի տեսլականին: Այս պատմական առիթով, ՀԵԴ-ի Կենտրոնական վարչութեան ներկայացուցիչը յուշանուէրներ է յանձնել իւրաքանչիւր նոր անդամի, իսկ մասնաճիւղին՝ ՀԵԴ-ի դրօշը: Նշենք, որ 1933 թուականին հիմնադրուած Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնն ընդարձակուել ու բազմանդամ է դարձել, հանդիսանալով ամերիկահայ երիտասարդական ամենամեծ ու ամենաազդեցիկ կազմակերպութիւնը, որը մասնաճիւղեր է հիմնել Միացեալ Նահանգների ամբողջ տարածքով մէկ եւ համագործակցել՝ աշխարհի քոյր կազմակերպութիւնների հետ: ՀԵԴ-ն գործնականապէս պայքարում է՝ զարկ տալու հայ երիտասարդութեան ընկերային, քաղաքական, կրթական ու մշակութային զարթոնքին:



Սեպտեմբերի սկզբին իրենց աշխատանքները սկսեցին Կալիֆորնիայի հայկական վարժարանները, վերամուտի հանդիսաւոր արարողութիւններով: Լոս Անջելոսում գործող շուրջ 17 հայկական վարժարանների, որոնց թւում՝ մանկամստրի, նախակրթարանի, տարարական ու միջնակարգ դպրոցների աշակերտներ յաջողութեան նոր հեռանկարներով սկսեցին 2008-2009 ուսումնական տարեշրջանը:



Շաբաթ եւ Կիրակի, Սեպտեմբերի 13-ին եւ 14-ին Գորման քաղաքի «Ֆրէյժըր» կոչուող ընդարձակ զբօսայգու «Արեւ» ճամբարում նշուել է Մուսա լեռան պատմական հերոսամարտի 93-րդ տարեդարձը, որին ներկայ են գտնուել բազմաթիւ հայեր, մասնաւորաբար Լոս Անջելոսում հաստատուած մուսալեռացիներ: Երկօրեայ խնջոյքի միջոցառումներին մաս են կազմել մատաղի օրինութեան եւ աննդական հարիսայի պատրաստուման արարողութիւնները, որոնք տեղի են ունեցել հայկական երգ ու պարի եւ համաժողովրդական տօնախմբութեան մթնոլորտում:



Լոս Անջելոսում գործող «Հայրենիք» միութիւնը Օգոստոսի սկիզբին մօտաւորապէս 70,000 դուլարի արժողութեամբ նպաստ է ուղարկել Հայաստան, ներառել 125 համակարգիչներ, 71 տպիչներ, համակարգիչների այլ սարքաւորումներ, գրքեր, կառքեր, ինչպէս նաեւ, բժշկական, խոհանոցային ու այլ ապրանքներ: Համակարգիչներն ու տպագրական գործիքները կը տրամադրուեն Արցախի Քաշաթաղ շրջանի դպրոցներին: Միութիւնը 1992 թուականից ի վեր 66 նման առաքումներ է կատարել Հայաստան ու Արցախ, որոնց ընդհանուր գումարը գնահատուում է 3 միլիոն դոլարով:

Այս լուրերը տրամադրուում են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից

ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են մաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: